

**<Շարժում-88> կուսակցության ԼՂՀ ԱԺ 2015թ. ընտրության նախընտրական
ծրագրի համառոտ դրույթներ**

- Հայեցի պետության կառուցում:
- Ազգային անվտանգության հայեցակարգի ընդունում:
- Անվտանգության և զարգացման հետագա ապահովում Արցախի Հանրապետության առնվազն ներկայիս փաստացի սահմաններում՝ Արցախի բաղկացուցիչ մաս կազմող և ադրբեջանական օկուպացիայի տակ գտնվող Շահումյանի շրջանի, Գետաշենի ենթաշրջանի, Մարտունու և Մարտակերտի որոշ հատվածների հետ միասին:
- Արցախի Հանրապետության լիարժեք ճանաչում ՀՀ և միջազգային հանրության կողմից՝ որպես երկու հայկական պետությունների միավորման պայման:
- Ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության զարգացում, քաղաքակիրթ քաղաքական մրցակցության համար պայմանների ապահովում:
- Սկզբունքային և անգիջում պայքար տնտեսության մեջ պետական պաշտոնյանների ապօրինի միջամտության, իշխանության և ձեռնբերեցության սերտաճման, հովանավորչության և հափշտակումների դեմ:
- Բացառել պետական միջոցներ յուրացրած անձի հետագա պաշտոնավարումը:
- Սոցիալ-տնտեսական քայլեր ձեռնարկել տեղական բազմատեսակ արտադրության ստեղծման և տեղական արտադրողների համար նոր շուկաներ գտնելու նպատակով:
- Խրախուսել ցածր ինքնարժեքով որակյալ արտադրանքի ստեղծմանը:
- Վարկավորել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումն արտադրության մեջ:
- Ապահովել այնպիսի պայմաններ, որ Արցախի գյուղացիները և ֆերմերները կարողանան գյուղատնտեսական մթերքով ամբողջովին ապահովել ներքին շուկան, այդ թվում Պաշտպանության բանակի կարիքները:
- Բժշկական ապահովագրության ներդրում, ինչը թույլ կտա էականորեն բարելավել բնակչության բժշկական սպասարկումը, բացառել բուժաշխատող-հիվանդ ֆինանսական հարաբերությունները, զգալիորեն բարձրացնել բուժաշխատողների աշխատավարձերը, հոգալ հիվանդանոցների վերազինման, բժշկական կրթության և վերապատրաստման ծախսերը:
- Պետությունը իր վրա պետք է վերցնի խոցելի սոցիալական խավերի բժշկական ապահովագրության ծախսերը: Բժշկական ապահովագրությունը հոգալու է նաև Արցախի քաղաքացիների՝ տեղում անհնարին համարվող բուժումը ՀՀ-ում կամ արտերկրում:
- Բժշկական ապահովագրության աստիճանական և տարբերակված համակարգի ներդրում, վճարի չափը կապելով քաղաքացու եկամուտների հետ: Սոցիալապես անապահով խավը կապահովագրվի պետության կողմից:
- Նվազագույն կենսաթոշակը, հաշմանդամության նպաստները և մանկական նպաստը պակաս չպետք է լինի սպառողական զամբյուղից:
- Արմատապես վերանայել կենսաթոշակային համակարգի գործունեությունը:
- Արցախյան պատերազմում զոհվածների և անհայտ կորած ազատամարտիկների այրիների նպաստը պետք է լինի առնվազն միջին աշխատավարձի չափ:
- Ազատագրված տարածքներում պետությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերի անհատույց սեփականաշնորհում Արցախի բոլոր բնակիչներին, Արցախից դուրս ապրող Արցախյան պատերազմի մասնակիցներին և Ադրբեջանից փախստական դարձած բոլոր հայերին՝ որպես փոխհատուցում: Կադաստրային ձևակերպումների ծախսերը պետությունը կվերցնի իր վրա: Այս տարածքներում հողի նոր սեփականատերերը հինգ տարով կազատվեն հողի հարկից:
- Աղքատության մակարդակի կտրուկ կրճատում, չքավորության վերացում:
- Սահմանային, վերաբնակեցվող գյուղերում հողի հարկը և գույքահարկը սահմանել զրո դրույքաչափով:
- Էականորեն օժանդակել միջին խավի կայացմանը:
- Շրջաններում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ձեռնարկությունների հիմնման դեպքում պետական օժանդակության ենթակառուցվածքների մասով՝ էլեկտրաէներգիա, գազ, ջուր:

- Էկո և էթնոտուրիզմի զարգացման ռազմավարության մշակում:
- Պետպատվերով օժանդակել զբաղվածության (հատկապես կանանց շրջանում) ապահովմանը (թեթև արդյունաբերություն):
- Բացառել մասնավոր կազմակերպությունների կողմից ծառայությունների իրացման և դրա դիմաց վճարման գործում պետության մասկակցության հակասահմանադրական գործառնությունները:
- 5 տարում պարենային ապահովության մակարդակի ապահովում:
- Պարենային անվտանգության ապահովման նպատակով գյուղատնտեսական հողերի նպատակային օգտագործման ճկուն և թափանցիկ մեխանիզմների ներդրում:
- Գյուղատնտեսությամբ զբաղվող բնական կոոպերացիայի օրենսդրորեն կարգավորում, ճկուն հարկային քաղաքականությամբ արտոնությունների տրամադրմամբ:
- Պետական օժանդակության հիմնական պարենային մթերքների շահավետ իրացման գործում:
- Ռոտզման ցանցի ընդլայնում, ռոտզման ջրի սակագնային արտոնությունների տրամադրում կոոպերացիաներին:
- Գազի, էլեկտարական էներգիայի սակագների օրենսդրական կարգավորում:
- Բոլոր բնակավայրերը 5 տարվա ընթացքում հյուսիս-հարավ մայրուղուն կապող ճանապարհների ասֆալտապատում:
- Պրոգրեսիվ հարկի կիրառում:
- Վերանայել ԱՊՊԱ սակագների մեթոդաբանությունը:
- Ներդնել բնակարանային ապահովման ամբողջական ռազմավարություն՝ հատուկ թիրախ սահմանելով սոցիալական բնակարանների շինարարությանը, լուրջ վերլուծության ենթարկելով վերջին տարիներին ոլորտում վարվող քաղաքականությանը:
- Ընդլայնել և կտրուկ բարձրացնել հանրային ծառայությունների սոցիալական փաթեթը ընդգրկելով առողջապահության, մշակույթի, կրթության, գիտության ոլորտները:
- Վերացնել կենսաթոշակային տարիքի հասնելու կապակցությամբ աշխատանքից ազատելու պահանջը մի շարք ոլորտներում՝ կրթության, առողջապահության, իրավական համակարգերում:
- Սահմանափակ կարողությամբ մարդկանց նկատմամբ վարվող քաղաքականությունը վերանայել նրանց օբյեկտից վերածելով սուբյեկտի, ստեղծելով ինքնադրսևորման նորմալ միջավայր: Աշխատանքում նրանց ներգրավումը խթանել հարկային արտոնությունների տրամադրմամբ:
- Բարձրացնել երեխաներին տրվող նպաստների չափը:
- Չաշխատող կանանց երեխայի խնամքի տարիները հաշվառել որպես աշխատանքային ստաժ:
- Օրենքով արգելել Ստեփանակերտի կենտրոնի կետային կառուցապատման արատավոր պրակտիկան:
- Առնվազն կրկնապատկել մեկ անձի հաշվով առողջապահական ծախսը:
- Պետականորեն վերահսկել դեղերի շուկան:
- 20 անգամ ավելացնել գիտությանը հատկացվող գումարի չափը:
- Ավելացնել բարձրագույն կրթության ֆինանսավորման չափը:
- Նորովի արժևորել մշակութային քաղաքականության դերը պետության կայացման գործում:
- Ստեղծել մշակույթի հիմնադրամ երիտասարդ շնորհալի ու տաղանդավոր երեխաներին օժանդակել ու նրանց սկսնակ ծրագրերը ֆինանսավորելու համար:
- Սահմանել հարկային արտոնություններ մշակույթի բնագավառում բարեգործությունը խթանելու համար:
- Ցանկացած երիտասարդ քաղաքացի պետք է ունենա ուսման, աշխատանքի, ստեղծագործման, բիզնեսով զբաղվելու իրական հնարավորություն:
- Վերանայել կրթաթոշակների չափերը:
- Ուսանողական թոշակը կապել նվազագույն աշխատավարձի հետ:
- Երեխա ունեցող ուսանողին ազատել ուսման վճարից :

-Սոցիալական բնակարանային համակարգում երիտասարդ ընտանիքը կունենա դրանից օգտվելու առավելություն:

-Արգելել առաջին անգամ աշխատանքի ընդունման ժամանակ աշխատանքային ստաժի առկայության պահանջը

-Ապակուսակցականացնել ուսումնական հաստատությունները:

-Ստեղծել մանկապատանեական մարզական համալիրների համապետական ցանց:

-Պատգամավորի անձեռնմխելիության սահմանափակում: Նրա հետկանչի մեխանիզմների ապահովում:

-Ընդիմության մասին օրենքի ընդունում՝ նրան վերապահելով վերահսկողական գործառույթներ:

-ԼՂՀ քաղաքացիության մասին օրենքի ընդունում՝ երկքաղաքացիության ինստիտուտի ներդրմամբ:

-Ազգային պետության և նրա հիմնախնդիրներին հետամուտ նոր քաղաքական, մշակութային, տնտեսական էլիտայի ձևավորում:

-Տինանսա-տնտեսական ոլորտի ստուգումների թափանցիկության ապահովում:

-Բացառել բիզնեսի սերտաճումը պետության հետ:

-ԿԸՀ նախագահի նշանակում ԱԺ կողմից:

-Քվեի կեղծումը քրեականացնել:

-Արցախը պետք է հանդես գա որպես բանակցային կողմ:

-ՀՀ և Արցախի միջև կնքել ռազմավարական դաշինք:

-Ըստ ամենայնի հետապնդել ԼՂՀ միջազգային ճանաչման հարցը:

-Հակամարտության կարգավորումը չպետք է բերի անվտանգության առնվազն ներկայիս մակարդակի նվազմանը:

-Բացառել Արցախյան հիմնահարցի կարգավորման փոխկապակցումը հայ-թուրքական հարցին:

-Նոր շունչ հաղորդել վերաբնակեցման ծրագրին:

-Կտրուկ ընդլայնել զինձառայողների ընտանիքների, ազատամարտիկների սոցիալական պայմանների բարելավման ձառայությունները և հատկացվող ֆինանսական միջոցները:

-Սկզբունքային և անզիջում պայքար տնտեսության մեջ պետական պաշտոնյաների ապօրինի միջամտության, իշխանության և ձեռներեցության սերտաճման, հովանավորչության և պետական միջոցների հափշտակության դեմ:

-Արհեստական ուռճեցված կառավարման ապարատի կրճատում: